

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ/Հ	Ոլորտ	2024թ. /հազ. դրամ/	2025թ. /հազ. դրամ/
1	Բնակարանաշինություն, բնակապահովում	2 140 850,0	69 600,0
2	Կրթական, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների շինարարություն	4 494 920,0	12 394 039,0
3	Ճանապարհաշինություն	9 092 820,0	4 056 335,0
4	Անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրեր	535 733,0	-
5	Ջրամատակարարում և ջրահեռացում, Կապսի ջրամբարի կառուցում	1 080 000,0	8 880 000,0
6	Նախագծային աշխատանքներ	5 535,0	241 964,0
7	Մասնավոր ներդրումներ	3 500 000,0	4 000 000,0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>20 849 858,0</b>	<b>29 641 938,0</b>

ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության ոլորտում 2025 թվականին իրականացվել են 29 միլիարդ 641 միլիոն 938 հազար դրամ գումարի աշխատանքներ.

- Բնակարանաշինություն և բնակապահովում – 69 միլիոն 600 հազար դրամ
- Կրթական, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների շինարարություն - 12 միլիարդ 394 միլիոն 039 հազար դրամ
- Ճանապարհաշինություն - 4 միլիարդ 56 միլիոն 335 հազար դրամ
- Անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրեր - 0
- Ջրամատակարարում և ջրահեռացում, Կապսի ջրամբարի կառուցում – 8 միլիարդ 880 միլիոն դրամ
- Նախագծային աշխատանքներ – 241 միլիոն 964 հազար դրամ
- Մասնավոր ներդրումներ – շուրջ 4 միլիարդ դրամ

**1. Բնակարանաշինություն և բնակապահովում - 69 միլիոն 600 հազար ՀՀ դրամ /ԲԳՎ /**

**ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՆՕԹԵՎԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ՎԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ  
/հերթացուցակ/**

ՀՀ Շիրակի մարզի համայնքներում 2008 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների դրությամբ հաստատված երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակներում 2025 թվականի դրությամբ դեռևս հաշվառված են երկրաշարժից անօթևան 1226 ընտանիքներ (ք.Գյումրի-1016, այլ բնակավայրեր-210):

	<b>2008թ. նոյեմբեր-դեկտեմբեր դրությամբ անօթևանների քանակը</b>	<b>2025թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ անօթևանների քանակը</b>
Գյումրի	4270	1016 /բանավոր տրված տեղեկատվության համաձայն՝ 991/ 25 շահառու մահացել են
Այլ բնակավայրեր	589	210
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐԸ</b>	<b>4859</b>	<b>1226</b>

**ՂԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՐՈՒՄ ԾԱՆԱԶՎԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՆՕԹԵՎԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ**

ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում 2022-2023 թվականների ընթացքում թվով 7 ընտանիք (2-ը Գյումրիում, 5-ը գյուղական բնակավայրերում) դատական կարգով վերականգնել են բնակարանային ապահովման իրենց իրավունքը և ճանաչվել բնակաապահովման ծրագրի շահառուներ: Նշված ընտանիքներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի N1299-Ա որոշմամբ՝ բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռքբերելու նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել էր **69,600.0** (վաթսուն ինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Վերջիններս արդեն իսկ ձեռք են բերել բնակարաններ:

Բնակարանային ապահովման ծրագրի շահառու է ճանաչվել ևս 1 ընտանիք և վերջինիս աջակցության տրամադրման գործընթացն իրականացնելու համար իր մասով կատարված ֆինանսական միջոցների հաշվարկը 2025 թվականին ուղարկվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտում ներառելու նպատակով:

**ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N1601-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ համայնքների ղեկավարների կողմից լրամշակվել և 2023 թվականի փետրվարի 1-ի դրությամբ հաստատվել են բնակավայրերում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված ոչ հիմնական

շինությունների ցուցակները: Նշված ցուցակներում 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ փաստագրված են 2816 ոչ հիմնական շինություններ, որից Գյումրի – 2537, Արթիկ – 2, Ախուրյան – 258, Ամասիա – 13, Անի – 6, Աշոցք – 0

**Ըստ նախատեսված միջոցառումների 2816 ընտանիքներից**

• **հավակնում են օգտվելու ԲԳՎ տրամադրման ծրագրից -336 ընտանիք**

( երկրաշարժից անօթևան կամ 4-րդ աստիճանի վթարայնության բնակարաններ ունեցող ընտանիքներ):

• **հավակնում են ստանալ մեկ սենյականոց բնակարանի արժեքի չափով ֆինանսական աջակցություն -96 ընտանիք**

(անօթևանների հերթացուցակում հաշվառված՝ կորցրած բնակարանի սենյակների թվի չափով բնակարան ստացած ընտանիքի մաս հանդիսացող քաղաքացիներ, ինչպես նաև պետական ծրագրի շրջանակում բնակարան ստացած, սակայն ԳՅ կառավարության 26.11.2009թ. N1402-Ն որոշման համաձայն բազմանդամ ընտանիքի մաս հանդիսացող քաղաքացիներ):

• **հավակնում են օգտվելու սոցիալական բնակարանաշինության ծրագրից -1296 ընտանիք**

(բնակարան օտարած /բացառությամբ պետության կամ համայնքի կողմից հատկացված/ կամ ներքին միգրացիայի արդյունքում հարակից համայնքներից փոխադրված կամ այլ պատճառներով ոչ հիմնական շինություններում բնակվողի կարգավիճակում հայտնված ընտանիքներ):

• **հավակնում են 1 տարի ժամկետով ստանալ 60 000 ամսական վարձ՝ բնակելի տարածության վարձակալության նպատակով -232 ընտանիք**

(պետության կամ համայնքի կողմից բնակարան ստացած կամ տրամադրված բնակարանի գնման վկայագրով ձեռք բերած բնակարանն օտարած ընտանիքներ):

• **պետական աջակցության տրամադրում չի նախատեսվում - 848 ընտանիքների**

(1.պետական աջակցության ծրագրի շրջանակներում բնակարան ստացած, սակայն տնակը չքանդելու պատճառով բնակարանը չսեփականաշնորհած ընտանիքներ,  
2.բնակարանի նկատմամբ սեփականություն ունեցող ընտանիքներ,  
3.բարեգործական ծրագրերով բնակարան ձեռք բերած ընտանիքներ,  
4.չբնակեցված /օգտագործվող/ ոչ հիմնական շինություններ) :

• **Որպես ոչ հիմնական շինություն համարակալված քարաշեն կառույցներ ենթակա են օրինականացման - 3 տնակ**

• **ընտանիքներ, որոնք ցանկություն են հայտնել ստանալ - 7 ընտանիք**

ոչ հիմնական շինությունով ծանրաբեռնված հողամասը՝ այդ տարածքում 3 տարվա ընթացքում բնակելի տուն կառուցելու պայմանով

(որից 6-ն ընդգրկված են նաև այլ ցուցակներում):

2. Թվով 48 կրթական, 1 մարզական և 5 առողջապահական օբյեկտի շինարարություն - 12 միլիարդ 394 միլիոն 039 հազար դրամ

Մարզում կառուցվում է թվով 14 դպրոց՝ ընդհանուր 23 միլիարդ 512 միլիոն 377 հազար դրամ արժեքով: 2025 թվականին իրականացվել են **3 միլիարդ 591 միլիոն 054 հազար** դրամի շինարարական աշխատանքներ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի **Քեթի բնակավայրի կրթահամալիրի** կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 566 միլիոն 626 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի հատկացվել է **904 միլիոն 240 հազար ՀՀ դրամ** գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026 թվականին:

Կապալառու՝ «ՄԱԼԱԶ» ՍՊԸ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի **Բյուրակն բնակավայրի կրթահամալիրի** կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 678 միլիոն 714 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականին իրականացվել են **290 միլիոն 623 հազար** դրամի աշխատանքներ: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026 թվականին:

Կապալառու՝ «Ալգարե» ՍՊԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի **Բավրա բնակավայրի կրթահամալիրի** կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 391 միլիոն 458 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի հատկացվել է **260 միլիոն 729 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2027 թվականին:

Կապալառու՝ «Ալմի» ՍՊԸ, «ԴՆ Լոգիստիկ» ՍՊԸ ՀԳ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի **Գետափ բնակավայրի կրթահամալիրի** կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 602 միլիոն 242 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի հատկացվել է **296 միլիոն 297 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ □Գոհարիկ□ ՍՊԸ:

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի **Հայրենյաց բնակավայրի կրթահամալիրի** կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 485 միլիոն 987 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի հատկացվել է **169 միլիոն 027 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ «Ալգարե» ՍՊԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի **Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի** շենքի կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 521 միլիոն 521 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի հատկացվել է **41 միլիոն 600 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ «Զի ԹԻ ԷՍ Բնարարքչև» ՍՊԸ և «ԱՉՈՒՐԻՏ» ՍՊԸ ՀԳ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի **Բերդաշենի միջնակարգ դպրոցի** շենքի կառուցում □ծրագրի արժեքը շուրջ 707 միլիոն 231 հազար դրամ□: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: 2025 թվականի հատկացվել է **408 միլիոն 253 հազար** դրամի գումար շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականին:

Կապալառու՝ «Շին» ՍՊԸ,

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➤ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի **Մայիսյանի միջնակարգ դպրոցի** շենքի կառուցում □ծրագրի արժեքը շուրջ 2 միլիարդ 039 միլիոն 724 հազար դրամ□: 2025 թվականի հատկացվել է **288 միլիոն 450 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2027 թվականին:

Կապալառու՝ «ԱՐՄԱՏ ԲՈՆՍԹՐԱԲՇՆ» ՓԲԸ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի **Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոցի** կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 941 միլիոն 960 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի հատկացվել է **184 միլիոն 480 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների միության «Ախուրյանի Կոոպչին» ՍՊԸ

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի **Սարատակի միջնակարգ դպրոցի** շենքի կառուցում □ծրագրի արժեքը 1 միլիարդ 935 միլիոն դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից հատկացվել է **134 միլիոն 190 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ «Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի **Ամասիայի միջնակարգ դպրոցի** շենքի կառուցում □ծրագրի արժեքը 2 միլիարդ 045 միլիոն 314 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից հատկացվել է **40 միլիոն 841 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ «Ալգարե» ՍՊԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի **Զրափիի միջնակարգ դպրոցի** շենքի կառուցում □ծրագրի արժեքը 2 միլիարդ 016 միլիոն դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից հատկացվել է **203 միլիոն 899 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ «Երվադա» ՍՊԸ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

➤ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի **Շիրակավանի միջնակարգ դպրոցի** շենքի կառուցում  ծրագրի արժեքը 1 միլիարդ 995 միլիոն 600 հազար դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին: 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից հատկացվել է **207 միլիոն 948 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականին:

Կապալառու՝ «Երվադա» ՍՊԸ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի **Ազատանի թիվ 2 միջնակարգ դպրոցի** շենքի կառուցում  ծրագրի արժեքը 1 միլիարդ 585 միլիոն դրամ): Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2022 թվականին: 2025 թվականին հատկացվել է **160 միլիոն 477 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքներն ավարտված են:

Կապալառու՝ «Շինբարեկարգում» ՍՊԸ ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

Մարզում վերանորոգվել են թվով 29 դպրոց՝ 7 միլիարդ 699 միլիոն 990 հազար դրամ արժեքով: 2025 թվականին իրականացվել են **7 միլիարդ 282 միլիոն 112 հազար** դրամի աշխատանքներ:

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ վերանորոգվել են թվով 28 դպրոց՝** Գյումրու թիվ 32 հիմնական, Գյումրու թիվ 41 հիմնական, Գյումրու թիվ 38 հիմնական, Գյումրու թիվ 28 հիմնական, Գյումրու թիվ 20 հիմնական, Գյումրու թիվ 11 հիմնական, Գյումրու թիվ 23 միջնակարգ, Գյումրու Օյունջյան միջնակարգ, Գյումրու թիվ 9 հիմնական, Գյումրու թիվ 19 հիմնական, Գյումրու թիվ 31 հիմնական, Գյումրու թիվ 45 միջնակարգ, Գյումրու թիվ 7 հիմնական, Գյումրու թիվ 5 հիմնական, Գյումրու թիվ 30 հիմնական, Կառնուտի միջնակարգ, Հայկավանի միջնակարգ, Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ, Ախուրյանի թիվ 2 միջնակարգ, Ազատանի միջնակարգ, Փանիկի միջնակարգ, Հառիճի միջնակարգ, Լեռնակերտի միջնակարգ, Նոր Կյանքի միջնակարգ, Արևշատի միջնակարգ, Աշոցքի միջնակարգ, Մուսայեյյանի միջնակարգ, Այգաբացի միջնակարգ դպրոց:

**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ** մեկնարկել են Ախուրյան համայնքի Ն. Աղբալյանի անվան միջնակարգ դպրոցի շենքի վերանորոգման և մարզադահլիճի կառուցման աշխատանքները:

**Մարզում կառուցվում են թվով 6 մանկապարտեզ՝** ընդհանուր 3 միլիարդ 160 միլիոն 163 հազար դրամ արժեքով: 2025 թվականին իրականացվել են **1 միլիարդ 133 միլիոն 173 հազար** դրամի աշխատանքներ:

- ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի մանկապարտեզի կառուցում  ծրագրի արժեքը 288 միլիոն 960 դրամ: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականին: 2025 թվականին հատկացվել է **28 միլիոն 896 հազար** դրամ գումար:

Կապալառու՝ «Երվադա» ՍՊԸ,

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

- ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Զարաբերդ բնակավայրում մանկապարտեզի կառուցում □ծրագրի արժեքը 349 միլիոն 041 հազար դրամ□: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականին: 2025 թվականին հատկացվել է **104 միլիոն 712 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026 թվականին:

Կապալառու՝ «ԲԻԼԴՐ ԲՆՍԹՐԱԲՇՆ» ՍՊԸ և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ ՀԳ,  
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

- ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի մանկապարտեզի կառուցում □ծրագրի արժեքը 626 միլիոն 608 հազար դրամ□: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականին: 2025 թվականի հատկացվել է **187 միլիոն 982 հազար** դրամ գումար: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականին:

Կապալառու՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ,  
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայրի մանկապարտեզի կառուցում □ծրագրի արժեքը 287 միլիոն 700 հազար դրամ□: 2025 թվականին իրականացվել է **114 միլիոն** դրամի աշխատանքներ:

Կապալառու՝ «ՏԵԽՆՈՍՏՐՈՅ» ՍՊԸ, «ՍՏՐՈՅՄՈՆՏԱԺ» ՍՊԸ և «ԱՐՄՍՎԵ ԳՐՈՒՊ» ՍՊԸ  
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի շենքի կառուցում □ծրագրի արժեքը 793 միլիոն 883 հազար դրամ□: Կառուցման աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին: 2025 թվականի հատկացվել է **347 միլիոն 530 հազար** դրամ գումար:

Կապալառու՝ «Ասֆալտշին քոնստրաքշն» ՍՊԸ  
Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արևշատ բնակավայրի «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի շենքի կառուցում □ծրագրի արժեքը 813 միլիոն 971 հազար դրամ□: 2025 թվականին հատկացվել է **350 միլիոն 053 հազար** դրամ գումար:

Կապալառու՝ «Գոհարիկ» ՍՊԸ,  
Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➤ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբռամարտի մանկապատանեկան դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի կառուցման □ծրագրի արժեքը 6 միլիարդ 796 միլիոն 931 հազար դրամ□ աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին: Սխալ նախագծման պատճառով մարզումների համար նախատեսված մասնաշենքի ծածկը ապամոնտաժվել է: Նախագիծը մշակող կազմակերպությունը պարտավորվել է փոխհատուցել վնասները: 2025 թվականին լուծվել է կապալային պայմանագիրը: Հայտարարվել է նոր մրցույթ: Իրականացվել է կատարված աշխատանքների հանձնում-ընդունում:

Պատվիրատու՝ Զաղաքաշինության կոմիտե:

➤ 2024 թվականից մեկնարկել են Արթիկի բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքները □ծրագրի արժեքը 2 միլիարդ 938 միլիոն 998 հազար դրամ□: 2025 թվականին հատկացվել է **320 միլիոն** դրամ գումար:

Կապալառու՝ «ԱՄՎ Պարտներ» ՍՊԸ,

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

➤ 2025 թվականից մեկնարկել են Արթիկ համայնքի Պեմզաշեն բնակավայրի բժշկական ամբուլատորիայի կառուցման շինարարական աշխատանքները փորագրի արժեքը 150 միլիոն դրամ: 2025 թվականին իրականացվել են **67 միլիոն 700 հազար** դրամ գումարի աշխատանքներ:

Կապալառու՝ «Գոհարիկ» ՍՊԸ,  
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

➤ 2025 թվականից մեկնարկել են Ախուրյան համայնքի Ախուրիկ փորագրի արժեքը 139 միլիոն դրամ և Հացիկ փորագրի արժեքը 142 միլիոն 500 հազար դրամ բնակավայրերի բժշկական ամբուլատորիաների կառուցման շինարարական աշխատանքները:

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ:

Ընթացքի մեջ են «Գյումրու ԲԿ» ՓԲԸ ծննդատան շինարարական աշխատանքները /2-րդ փուլ/: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 499 միլիոն 750 հազար ՀՀ դրամ:

### 3. Ճանապարհաշինության ոլորտ- 4 միլիարդ 056 միլիոն 335 հազար

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ մարզում իրականացվում են.

**39 կմ** ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում փնդհանուր 6 միլիարդ 832 միլիոն 781 հազար ՀՀ դրամի արժեքով: 2025 թվականին իրականացվել է **2 միլիարդ 522 միլիոն 400 հազար** ՀՀ դրամի աշխատանքներ:

1. Մ-1՝ Երևան-Գյումրի-ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 130+100 - կմ 134+500 (**4,4 կմ**) հատվածի հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 687 000 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել է **687 000 000** ՀՀ դրամի աշխատանք:

Կապալառու՝ փասպուրականի ճՇՇ ՍՊԸ:

2. Մ-7՝ /Մ-3/-Սալիտակ-Գյումրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ 47+100-կմ 48+000 (**0,9 կմ**) հատվածի հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 192 000 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են **36 100 000** ՀՀ դրամի աշխատանքներ: Կապալառու՝ Սերժմոսկովյան ԲԲԸ:

3. Հ-31՝/Մ-1/-Վարդաղբյուր-Տաշիր-/Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 5+000 (5 կմ) հատվածի հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 759 600 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են **759 600 000** ՀՀ դրամի աշխատանքներ:

Կապալառու՝ Սերժմոսկովյան ԲԲԸ:

4. Տ-7-48՝Գյումրի(Տ-7-58)-Արևիկ-Այգաբաց-Վարդաքար/Հ-21/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ10+440 (**10,4 կմ**) հատվածի հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1 979 869 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են **900 000 000** ՀՀ դրամի աշխատանքներ: Կապալառու՝ Եվրոասֆալտ ՍՊԸ:

5. Գյումրիի Շիրակացի փողոց՝ Մ-1, Երևան-Գյումրի-ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոճանապարհի (**2,4 կմ**) տարանցիկ հատվածի հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 888 000 000 ՀՀ դրամ: 2025

թվականին իրականացվել են **139 700 000** ՀՀ դրամի աշխատանքներ: Կապալառու՝  
□Մերձմոսկովյան□ ԲԲԸ:

6. Հ-21/Հ-75/-Հոռոմ-Արթիկ-Ալազյազ/Մ-3/ ավտոճանապարհի կմ29+600 կմ32+700 (**3,1 կմ**) հատվածի հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 800 727 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են թերութունների վերացման աշխատանքներ:

Կապալառու՝ □Մերձմոսկովյան□ ԲԲԸ:

7. Տ-7-53/Հ-21/(Նոր Կյանք)-Փանիկ-Արևշատ-/Հ-21/(Մեծ Մանթաշ) մարզային նշանակության կմ0+000 կմ12+800 (**12,8 կմ**) ավտոճանապարհի հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1 525 585 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են թերութունների վերացման աշխատանքներ:

Կապալառու՝ □Մերձմոսկովյան□ ԲԲԸ:

**23,4 կմ** երկարությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգում □ընդհանուր 2 միլիարդ 70 միլիոն 582 հազար ՀՀ դրամ արժեքով□: 2025 թվականին իրականացվել են **446 միլիոն 606 հազար** դրամ գումարի աշխատանքներ:

1. Հ-75/Հ-62/-Իսահակյան-/Մ-7/(Գյումրի) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ60+200-կմ67+330 և կմ70+800-կմ73+593 հատվածների միջին նորոգում (**9,83 կմ**): Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 944 000 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են **100 000 000** ՀՀ դրամի աշխատանքներ:

Կապալառու՝ «Եվրոասֆալտ» ՍՊԸ:

2. Հ-21/Հ-75/-Հոռոմ-Արթիկ-Ալազյազ/Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ8+777+կմ19+107 հատվածի միջին նորոգում (**10,3 կմ**): Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 770 682 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են թերութունների վերացման աշխատանքներ:

Կապալառու՝ «Վասպուրական» ՍՊԸ:

3. Մ-1՝ Երևան – Գյումրի-ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոճանապարհի □Մոտեցում Գյումրու օդանավակայանին□ (**2 կմ**) հատվածի միջին նորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 276 000 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են **266 706 000** ՀՀ դրամի աշխատանքներ:

Կապալառու՝ □Ա.Ա.Բ պրոեկտ□ ՍՊԸ:

4. Մ-1՝ Երևան – Գյումրի- ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ172+700 կմ173+980 (**1,3 կմ**) հատվածի միջին նորոգում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 79 900 000 ՀՀ դրամ: 2025 թվականին իրականացվել են **79 900 000** ՀՀ դրամի աշխատանքներ:

Կապալառու՝ □Թրաֆֆիզ□ ՍՊԸ:

Շարունակվում է Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-Հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզում կառուցվում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք Տրանշ-3 Լանջիկ-Գյումրի կմ 90+200 կմ 113+170 հատվածը (**23,4 կմ**): Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 74 066 179 եվրո (32 589 119 000 ՀՀ դրամ): 2025 թվականին իրականացվել են **1 707 960 եվրոյի (751 502 400 ՀՀ դրամ)** աշխատանքներ:

Կապալառու կազմակերպություն «Սինտիդրո Զորփորեյշն» ՍՊԸ (Զինաստան):

Մարզային նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների շրջանակներում կնքված պայմանագրերի համաձայն 4 ճանապարհաշինարարական կազմակերպությունների (Աշոցքի ԱՏԾ- սպասարկում Է Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանները, Մերձմոսկովյան ԲԲԸ-սպասարկում Է Ախուրյանի տարածաշրջանը, Ճանշին ՓԲԸ - սպասարկում Է Արթիկի տարածաշրջանը, ԱՆԻԻ ԾՇՇ ՍՊԸ - սպասարկում Է ԱՆԻԻ տարածաշրջանը) կողմից 2025 թվականին իրականացվել են 344 կմ երկարությամբ ընթացիկ ձմեռային պահպանման և 142 կմ երկարությամբ ընթացիկ ամառային պահպանման՝ ընդհանուր **335 միլիոն 827 հազար** դրամ գումարի չափով աշխատանքներ:

## **5. Ջրամատակարարում և ջրահեռացում, Կապսի ջրամբարի կառուցում – 8 միլիարդ 880 միլիոն**

Ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված է ընդհանուրը 31 միլիարդ 506 միլիոն 78 հազար դրամ գումար: 2025 թվականին իրականացվել են **20 միլիոն եվրո (8 880 000 000 ՀՀ դրամ)** գումարի շինարարական աշխատանքներ: Շինարարական աշխատանքներն իրականացնում է չինական «Շանսի Քոնսթրաքշն Ինվեսթմենթ Գրուպ Կո» և «Շանսի Հայդրոլիկ Քոնսթրաքշն Ինջինիրինգ Բյուրո» համատեղ ձեռնարկությունը:

## **6. Նախագծային աշխատանքներ – 241 միլիոն 964 հազար դրամ**

➤ «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում (արժեքը՝ **239 միլիոն 800 հազար** դրամ): Նախագիծը ներկայացվել է համալիր փորձաքննության:

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն:

Նախագծի հեղինակ՝ Անահիտ Գևորգյան Ա/Ձ:

➤ Գյումրու «Լապտերիկ», «Արևիկ» և ԱՆԻ համայնքի Սառնաղբյուրի մանկապարտեզների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում (արժեքը՝ **2 միլիոն 164 հազար** ՀՀ դրամ):

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ:

Նախագծի հեղինակ՝ «ՄԻԿՊՈՌ» ՍՊԸ:

## **7. Մասնավոր ներդրողներ – շուրջ 4 միլիարդ դրամի կապիտալ ներդրումներ**

➤ Անհատական բնակելի և հասարակական շենքերի կառուցում: 2025 թվականին կապիտալ ներդրումների ծավալը կազմել է շուրջ **4 միլիարդ** դրամ:

## **Հողաշինության ոլորտ**

### **1. Հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ սահմանված կարգով ուսումնասիրվել են 01.07.2025 թ. դրությամբ մարզի համայնքների կողմից կազմված հողային հաշվեկշիռները, դրանց

ամփոփման արդյունքում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Վերջինիս կողմից մարզի հողային հաշվեկշռի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Ըստ 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմվող մարզի հողային հաշվեկշռի, մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի կազմում Էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

## **2. Հողերի օտարում, վարձակալության տրամադրում**

2024 թվականի ընթացքում մարզի թվով **6** համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում օտարվել է ընդամենը **27.07 հա** համայնքային սեփականություն հանդիսացող հող: Վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է **132 մլն 536 հազ. դրամ**: Ապահովվել է ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի նկատմամբ բարձր մակարդակ: **2024 թվականին** նույն ժամանակահատվածում օտարվել է համայնքային սեփականություն հանդիսացող **26.55 հա** հող՝ **241 մլն 468 հազ. դրամ** գումարով:

2025 թվականի ընթացքում մարզի թվով **6** համայնքներում անցկացված հողերի վարձակալության տրամադրման մրցույթների արդյունքում վարձակալության է տրամադրվել **507.63 հա** համայնքային սեփականություն հանդիսացող հողեր՝ **2 մլն. 45 հազ. դրամ** վարձավճարով: Ապահովվել է օգտագործման տրամադրված հողամասերի հողի հարկի դրույքաչափի նկատմամբ վարձավճարի բարձր մակարդակ:

Ապահովվել է օտարված և վարձակալության տրամադրված հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումները:

## **3. Հողերի նպատակային նշանակության փոփոխություններ**

Հաշվետու ժամանակահատվածում՝ ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, մարզի թվով 6 համայնքների կողմից կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ են ներկայացվել հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու համար կազմված թվով **46** հողաշինարարական փաթեթներ, որոնք սահմանված կարգով ուսումնասիրվել և համապատասխան եզրակացությամբ ներկայացվել են ՀՀ Զաղաքաշինության կոմիտե: Վերը նշված փաթեթներից թվով **7-ի** վերաբերյալ ստացվել են դրական եզրակացություններ, թվով **39** հողաշինական փաթեթների համաձայնեցման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: **Բացասական եզրակացություն ոչ մի փաթեթի վերաբերյալ չի ներկայացվել:**